Գողթանիկ

Բնակչության թիվը՝ 198

Այն գտվում է Վայոց ձորի մարզի Երեգնաձորի տարածաշրջանում՝ Եղեգիսի կիրճում, Եղեգիս գետի ձախ ափին՝ հյուսիսարևելյան մասում։ Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 30կմ է, հանարապետական նշանակության ճանապարհից՝ 29կմ։

Համայնքը հյուսիսարևելքից սահմանակից է Կարմրաշեն գյուղական համայնքին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ գյուղական համայնքին, իսկ հարավարևմուտքից սահմանակից՝ Հերմոն գյուղական համայնքին։

Գյուղը մինչև 1988թվականը բնակեցված է եղել ադրբեջանցիներով, իսկ 1988թվականից՝ Ղարաբաղյան պատերազմի պատճառով բռնի տեղահանված փախստական հայերով։

Գյուղը նախկինում անվանվել է <<Ղաբախլու>>, իսկ 90-ական թվականներից հետո գյուղը վերանվանվել է <<Գողթանիկ>>, քանզի բնակչության 80%-ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գողթն գավառից։

Գյուղում կա մի քանի խաչքարեր և կիսաքանդ եկեղեցի:

Գյուղը գտնվում է Ծ.Մ. 1850մ. բարձրության վրա։

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը զով։

Լինում են չորային և երաշտի տարիներ, տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է։

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասանպահությամբ։ Մշակում են բանջարաբոստանային և ցանովի մշակաբույսեր։

Զբաղվում են անասնապահությամբ և մեղվաբուծությամբ։

Գյուղն ունի դպրոց և բուժկետ: